




ԲՅՈՒՑՆԻ

ԺՈՂՈՎԴԷԱԿԱՆ ՎԵՂԱՍԱՆՈՒԲՅՈՒՆ

ԱՐՄԳԱՆ

894.362/13. 4527

F-65 Lynn - Onff.

Հոգևորականության օրհանոց -

հարցում: 12ր.

АКАДЕМИЯ НАУК СССР—АРМЯНСКИЙ ФИЛИАЛ
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ И ЯЗЫКА

КЁР-ОГЛЫ

НАРОДНЫЙ ЭПОС

(На армянском языке)

ИЗДАТЕЛЬСТВО АРМФАН-а
ЕРЕВАН 1941

894.369-13

8-65

ՍՍՌՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ—ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ
ԳՐԱԿԱՆ ՈՒԹՅԱՆ ԵՎ ԼԵՋՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՅՈՒՆԻԿՍԿԻ Ե 1981 թ.

ՔՅՈՌ-ՕՂԼԻ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՎԻՊԱՍԱՆՈՒԹՅՈՒՆ



ԱՐՄՖԱՆ-Ի ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1941

Տպագրվում է ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի
Հայկական ֆիլիալի Նախագահության որոշմամբ.

Հավանեց եմ գրի առաւ
Գ. ԹԱՐՎԵՐԴՅԱՆ

Անդրկովկասը ներկայացնում է ժողովրդական բանաստեղծութիւյան ու վիպասանութիւյան հարուստ շտեմարան, որն սկիզբ է առնում դեռ հին ժամանակներից:

Անդրկովկասի յուրաքանչյուր ժողովուրդ մտցրել է այդ բանահյուսութիւյան մեջ իր լուծան: Ամեն մեկն ունեցել է իր սիրելի հերոսները, որոնց հետ կապել է իր ապրումներն ու ձգտումները, իր դարավոր աղատատենչ պայքարը բոլոր ճնշողների, կեղերողների ու շահագործողների դեմ:

Սակայն, եթե ամեն մի ժողովուրդ առանձնահատուկ գույն է տվել իր բանաստեղծական ու վիպասանական ստեղծագործութիւններին, եթե նա ազգային ձևով է կադապարել այն դեմքերն ու գեղքերը, որ արտացոլել է իր բանահյուսութիւյան մեջ, ապա սոցիալական հակասութիւնները, օտար նվաճողների բռնակալութիւնն ու սրան հարակից քաղաքական ծանր դրութիւնն ընդհանուր լինելով Անդրկովկասի բոլոր ժողովուրդների համար, ստեղծել են մի ուրույն պատմական ֆօն, համակել են նրանց պայքարն ու իդեալները համանման շեշտերով:

Վրաց ժողովուրդն ունի իր հռչակավոր «Վազրենավորը», որը թեև բանաստեղծ անմահ Շոթա Ռուսթավելու ստեղծագործութիւնն է, բայց նրա հանձարեղ վիպասանական գործի մեջ բյուրեղացել են ժողովրդական ակունքներից բղխող բանավոր դանձերը, հերոսական արտահայտիչ գծերը, ազնիվ սիրտ, տապալուծութիւն, իմաստալից կյանքի գաղափարները:

Հայ ժողովուրդն ունի իր «Սասնա ծռեր» վիպասանութիւնը, զուտ ֆոլկլորային բանահյուսութիւն, որն իր պարզ, անպաճույճ հորինվածքում պատկերավոր դժերով պարունակում է խոր հնութիւն կենցաղային միջավայրը, որտեղ դրսևորվել է գյուղացու նահապետական աշխարհայեցողութիւնն իր ստեղ-

ծած հերոսներով, տիրող սոցիալական հակասություններով ու սպաքարի արտահայտումներով:

Ադրբեջանական ժողովրդական վիպասանությունն էլ կերտել է իր «Բյոռ-Օղլին», հերոսական մի դյուցազուններգություն, որտեղ ամփոփվել են ժողովրդի բնավորության լավագույն գծերը:

Ահա այդ ժողովրդական բանավոր ստեղծագործությունն այսօր իր արժանի գնահատումն է ստանում, կուլտուրական մեծագույն արժեք է հանդիսանում՝ շնորհիվ լենինյան-ստալինյան ազգային քաղաքականության: Սովետական մեծ Միությունը համերաշխ, անխախտ դաշինքով համախմբել է բազմաթիվ ազգություններ, որոնք հնարավորություն են ստացել իրենց ժառանգած կուլտուրական արժեքները դարգացնել և ստեղծել մի նոր կուլտուրա՝ ձևով ազգային ու բովանդակությամբ սոցիալիստական: Այդպիսի բարձր գնահատականի է արժանացել ներկայումս ադրբեջանյան «Բյոռ-Օղլին»: Մեծ թափով հավաքվում և գրի են առնվում Անդրկովկասի բոլոր վայրերում նրա բազմաթիվ ցիր ու ցան վարիանտները՝ զանազան լեզուներով և խմբագրվում ու հրատարակվում են: Նույնիսկ «Բյոռ-Օղլի» վեպը վերածվել է այսօր ադրբեջանյան օպերայի, որը կառուցված է ժողովրդական երգի ու երաժշտության մոտիվների վրա:

Բյոռ-Օղլու վեպն անհատական ստեղծագործություն չէ, այլ աշուղական սերունդների ժառանգական ասմունքի արդյունք: Այդ վեպը չի կարելի դասել ֆոլկլորային բանահյուսության շարքը, բայց և այնպես նա գերազանցորեն ժողովրդական է, խտացած ժողովրդական բանահյուսության բնորոշ կոլորիտով, գյուղացիական իմաստաբանության ու աշխարհագրացողության յուրահատուկ գծերով: Մեզ հայտնի չեն այդ վիպասանության հեղինակ-աշուղները, որովհետև նրա սկզբնական հեղինակները մերվել են ժողովրդականության մեջ, որտեղ «Բյոռ-Օղլի» վեպը առաջացել է բազմաթիվ վարիանտներով, զանազան ժողովուրդների լեզուներով՝ ադրբեջաներեն, հայերեն, վրացերեն, քրդերեն և այլն: Սակայն «Բյոռ-Օղլի» վիպասանության մեջ մի տեղ հիշատակվում է, որ «Բյոռ-Օղլի» վեպի հեղինակն իբր թե աշուղ Ջունուսն է, որն ապրում էր մշտապես Բյոռ-Օղլու մոտ: Ըստ վիպասանության՝ Բյոռ-Օղլին հարձակվելով ու թալանելով Քաղըրդյանների կարավանը, ազատում է աշուղ Ջունուսին, որ փակված է եղել մի արկղի մեջ: Աշուղը, երախտադարա լինելով

իր ազատարարին, որոշում է այնուհետև երգել ու փառաբանել միայն Քյոռ-Օղլու կյանքն ու քաջագործությունները։ Սա, իհարկե, լեզենդար ավանդություն է, բայց ընդհանրապես այդ վեպի հեղինակները հանդիսացել են ժողովրդական երգիչները՝ աշուղները։

«Քյոռ-Օղլի» վեպի հեղինակի հարցը որոշ չափով համանման է Հոմերոսի «Իլիական» ու «Ոդիսական» վեպերի հորինման պատմությանը։ Վերջին ուսումնասիրական հետազոտություններն ապացուցում են, որ ենթադրյալ Հոմերոս անունով հույն ժողովրդական կույր երգիչ-ուսուցիչն վերագրված այդ երկու վեպերը հիմնականում եղել են դանազան հույն ռափսոգների հյուսած բանաստեղծական վեպեր, որոնց հնությունը հասնում է մինչև XII—XI դարերը նախքան մեր տարեթիվը։ Այդ վիպասանական երգերի ծագման շրջանը վերագրվում է X և IX դարերի երգիչներին։ Հետագայում արդեն, VI դարում (մեր թվակ. առաջ), այդ վիպասանական երգերը, որոնք հյուսվել են Իլիոնի (Տրոյայի) պատերազմի և նրա հերոսներից մեկի՝ Ոդիսևսի՝ հայրենիք վերադառնալու ճանապարհորդության շուրջը, զրի են առնվում, խմբագրվում և ապա կազմվում են երկու առանձին դյուցազներգություններ։

Նույնը կարելի է ասել և «Քյոռ-Օղլի» վիպասանության մասին։ Անկասկած, այդ վեպի արմատը պատմական իրականություն է, որ նյութ է ծառայել իր ժամանակվա ժողովրդական երգիչների-աշուղների ստեղծագործություններին։

Աշուղների ստեղծագործության պրոցեսը Քյոռ-Օղլու էպոսի շուրջը, պետք է կարծել, որ տեղի էր մինչև XIX դ. սկիզբները։ Դրանով պետք է բացատրել մեզ հասած մեծ թվով վարիանտների չափազանց բազմազանությունը, որտեղ հին վարիանտների վրա կամ կուտակվել են նոր բանաստեղծական հորինումներ, կամ հին սկզբնական վարիանտները փոփոխություն են ենթարկվել ըստ դանազան վայրերի, թերևս էլ՝ աղճատվել ու այլասերվել են։ Հետագայում, XIX դարից մինչև մեր օրերը, աշուղների երգերում, լավագույն դեպքում, ավանդական պահպանողությամբ աշխատել են անփոփոխ վերարտադրել հին սերնդից ժառանգած վիպասանությունները։

Այստեղ է, որ ներկայումս դրացվում է անհրաժեշտություն ըստ կարելույն լրիվ հավաքել ու զրի առնել «Քյոռ-Օղլի» վիպասանության բոլոր վարիանտները, խմբագրել, սխտեմավորել, զրսեորել

հարազատ և հիմնական վարիանտները, ազատելով այն հետազա-
տարավարումներից, Դրանով թերևս հնարավոր լինի այդ ամենից
կերտել ամփոփ ու միասնական մի դյուցազներգություն, իր հարա-
զատ հոյակապ կառուցվածքով, որը, կարծում ենք, պետք է լինի
«Քյոռ-Օղլի» վիպասանությամբ զբաղվող մասնագետների հետա-
դա նպատակը:

II

«Քյոռ-Օղլի» վիպասանության հիմնական սյուժետային
կորիզը բոլոր վարիանտներում գրեթե պահպանված է նույնու-
թյամբ:

Քյոռ-Օղլին, որ պատանեկության ժամանակ կոչվում էր
Ռուշան, Միրզա-Սերաֆ (մի քանի վարիանտներում՝ Ալի) անու-
նով հայր ունեւր: Վերջինս 40 տարի հավատարիմ ծառայում էր
Ֆեոդալ Հասան-խանի մոտ ախոռապետ-ձիապանի պաշտոնով:
Միրզա Սերաֆը (Ալին) աճեցնում էր Ֆեոդալ Հասան-խանի երա-
մակում ի միջի այլոց նաև հրեղեն ձիուց ծնված մարուկ, որ
սկզբներում արտաքուստ խիտ աճող տեսք ունեւր: Հասան-
խանը տեսնելով իր ընտիր ձիերի շարքում այդպիսի մի ազնի
մարուկ և հաժտաւ չընծայելով իր ձիապանի հավաստիացումներին՝
թե հրեղեն ձիուց է դոյացել այդ մարուկը, իրեն անպատված է հա-
մարում և բարկությամբ լցված հրամայում է խառորեն պատժել
ձիապանին, կուրացնելով նրա աչքերը, և արտաքսել ծառայու-
թյունից: Այդ օրվանից Ռուշանը ստանում է «Քյոռ-Օղլի» անունը,
այսինքն՝ «կուլքի որդի»:

Դժբախտացած կուլք ձիապանը հեռանում է խանի մոտից
իր վրեժխնդիր որդու և այդ մարուկի հետ միասին: Այդ ժա-
մանակ մարուկը, որի անունն էր Ղաթ (շագանկադույն),
մեծանում և խելապես դառնում է գերբնական արագության, խե-
լացի, հեքիաթային մի ձի, որի շնորհիվ Քյոռ-Օղլին դառնում է
անպարտելի հերոս: Ղաթը նրա անբաժանելի ընկերն էր, նրա
հույսը, նրա ապավենն ու սերը:

Քյոռ-Օղլին իր կուլք հոր մահից հետո արդեն առնացել էր
և, նրա խրատներով անված, համակվել էր անսահման վրեժխնդ-
րությամբ ոչ միայն զեպի Հասան-խանը, իր հոր կուրացնողը,
այլև զեպի բոլոր խաները, բեկերը, փաշաները, ազաները, որոնք
այնպես նամարդ էին վարվում իրենց ստորադրյալների հետ և
անվերջ կեղեքում աշխատավոր, չքավոր ժողովրդին՝ ուսյաթին:

Նա նույնպէս ատելութեամբ ու թշնամարար էր տրամադրված զեպի վաճառականները, որոնք խարերայութեամբ հարստութեաններ էին կուտակում: Հալածելով իր շուրջը մի քանի տասնյակ իրեն պէս անվեհեր ու քաջ ընկերներ՝ «զալիներ», որոնք նույնպէս ներհակորեն էին տրամադրված զեպի տիրապետողներն ու շահագործողները, Քյոռ-Օղլին «զաչաղների» խումբ է կազմում և ամրանում «Շամլի-Բել» բերդում:

«Շամլի-Բել» անունն էլ ունի բնորոշ նշանակութիւն մեր վեպում իր րանաստեղծական այլաբանութեամբ: «Շամ» նշանակում է սոճի ծառ, իսկ «բել» — թիկունք, մեջք. հետևապէս ամբողջ անունը՝ «Շամլի-Բել» պատկերացնում է սոճու անտառով պաշտպանված ամրոց. մի քանի վարիաններում «Շամլի-Բել» անվան փոխարեն հանդիպում ենք «Չամլի-Բել»: Այս դեպքում «չամը» բառը նշանակում է մառախուղ, որով «Չամլի-Բելը» հասկացվում է մառախլապատ, մառախուղով պաշտպանված բերձունք, ամրոց:

Ահա «Շամլի-Բելի» Քյոռ-Օղլին իր ընկերներով շարունակ ասպատակում է խաների ու փաշաների երկրները, թալանում, սողանում է նրանց, հարձակվում է վաճառականների կարավանների վրա, հափշտակում ապրանքները, խլում նրանց հարստութեանները, որից մասն է հանում և նվիրում ռայաթին, չքավոր գյուղացիներին: Նմանապէս սիրային և այլ արկածներով նա առեւանգում է խաների ու փաշաների զեղեցիկ աղջիկներին, որոնք դառնում են նրա ու «զալիների» ամուսինները: Ահա այսպիսի մի շարք սիրային արկածային դեպքեր, վրեժխնդիր հարձակումներ, հերոսական կռիւներ, զալիների քաջագործութեաններն ու համատարմութեանը զեպի իրենց սիրելի առաջնորդը, Ղաթիբ և այդ ամենի վրա Քյոռ-Օղլու քաջարի անձնավորութեանը՝ կազմում են միշտ վիպասանութեան գլխավոր մոտիվները:

«Քյոռ-Օղլի» վեպի համատարած ժողովրդականութեանը և նրա հերոսական անձնավորութեան մեծարումը բոլոր անդրկովկասյան բնիկ ժողովուրդների մեջ, նաև այդ վիպասանութեան մեջ հաճախ հիշատակվող խաների, փաշաների, ինչպէս և քաղաքների, գետերի և այլ վայրերի անունները՝ հարց են հարուցանում այդ վիպասանութեան զեպիներն ու գործող անձերի, առանձնապէս Քյոռ-Օղլու պատմականութեան հշտութեան մասին:

Քյոռ-Օղլու անձի պատմականութեան հարցը տակաւին

անորոշ է մնում: Սակայն մի շարք տվյալներ հիմք են տալիս հավանական ենթադրություն անելու, որ իրոք XVII դարում գոյություն է ունեցել Քյոո-Օղլի անունով անձ և մեծ հռչակ է վայելել:

«Քյոո-Օղլի» վիպասանության աղբյուրնայան ու առակահան վարիանտներում հիշատակվում է, որ Քյոո-Օղլին ծագումով թուրքմեն է եղել, Տուկ ցեղից և նրա հայրը ծառայել է Սուլթան Մուրադի մոտ¹: Սակայն, եթե վիպասանությունը, աշուղական բանաստեղծություն լինելով, կարող է այնքան էլ իրական ճշմարտություն չներկայացնել, ապա Քյոո-Օղլու մասին կան բազմաթիվ ժողովրդական ավանդություններ իրանում, թյուրքիայում և Անդրկովկասում, որոնք քիչ թե շատ պատմական հիմք են հանդիսանում:

Ըստ այդ ավանդությունների, Քյոո-Օղլին ծագումով հյուսիսային Պորասանից էր և ապրում էր XVII դարի երկրորդ կիսին: Նրա անունը հռչակ ստացավ, երբ նա փկեց հարձակումներ գործել ու թալանել վաճառականների քարավանները, որոնք երթնեկում էին իրանից դեպի թյուրքիա տանող առևտրական ճանապարհի վրա, իսկ և էրզրում քաղաքների միջև²: Մի այլ ավանդությամբ Քյոո-Օղլին օսմանցի էր՝ Բայազեդ քաղաքից³:

Քյոո-Օղլու անվան հետ են կապված մի շարք բերդերի ավերակ մնացորդներ, որոնք մինչև այսօր էլ կան թյուրքիայում, իրանում, Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում: Եթե վիպասանության մեջ հիշատակվում է Քյոո-Օղլու բերդը, որ հայտնի է ամենուրեք Շամլի-Բեկ անունով, և այն ներկայացվում է որպես նրա և նրա զինակիցների մշտական ու հիմնական կայան, ապա այդ բերդը՝ ըստ զանազան վիպական վարիանտների՝ գտնվում է տարբեր ու իրարից բավական հեռու վայրերում, նայած վարիանտի պատմության աշխարհագրական ասույթին: Մերթ Շամլի-Բեկը գտնվում է իրանում, այն է՝ Սալմաստի հովտում, ուր այսօր էլ ցույց են տալիս ենթադրյալ բերդի ավերակները, մերթ թյուրքիայում, Ղարսի ու էրզրումի միջև Սողանլուզի լեռներում, նմանապես Կողբի մոտակա լեռան վրա, և այլն:

¹ С.С. Пеня—Кер-оглу, восточный воезник, Тифлис. 42 2.

² Ibid, 42 1.

Զնայած, որ Շամիր-Բեկ կոչված բերդը համարվում է Քյոռ-Օղլու և նրա զինակիցների մշտական բնակավայրը, այնուամենայնիվ, նրա անվան հետ առնչութիւն ունեցող բերդերի առկայութիւնը զանազան երկրներում՝ կարող է որոշ պատմական իրականութիւն համարվել։ Այդ հանգամանքը ենթադրել է տալիս, որ Քյոռ-Օղլին իր ռազմական ու արկածային անհանգիստ կյանքի հետեանքով ստիպված էր իր ռազմիկ խմբի հետ հաճախ աստանդական լինել, մերթ այս, մերթ այն երկրում ժամանակավոր բնակայան հաստատել, ամուր և անառիկ բերդեր կառուցելով լեռներում։

Այս մեր ենթադրութիւնը որոշ չափով հաստատվում է հայերեն մի երգարանի 1721 թ. ձեռագրով։ Առաջ ենք բերում հիշատակարանն ու Քյոռ-Օղլուն վերաբերյալ տեղեկութիւնները, որ գրել է Իրանի վաճառական Նզիրաս Մուշեղյանը։ Սա ժամանակակից հայտնի քաղաքական անձնավորութիւններից էր, որ գործուղվել էր Իրանի շահի կողմից Ռուսաստան և Ասորախանում ձերբակալվել որպէս գաղանի քաղաքական գործակալ։

«Գիրք խաղից երաժշտականաց յարմարեալ այլ և այլ արանց և պէս պէս կապակցութեանց խըրթնախմբաց իրաց այսինքն բանաստեղծ արանց հնարեալ, վասն այնորիկ կամեցա հնարեալ արանց ասմունքն գրել աստ լսոյեալն, որ ի մարմնաւոր խրախուժիւնքս եղպարց, այսու ուրախանալն լաւ համարիմ, քան թէ ըանրասխաօսել զայլս. եղև յամին տն 1721, յունւարի 25. սկսեցի Դավրէժ քաղաքին որն այժմ տիրեն ազդն պարսից. զծագրեցաւ ծառայի էլիսու Աստուածատրեան Մուշիեանց, ծնունդս Կարնոյ. սերունդս Խոտրջրոյ գաւառին, ցեղիցն Գասպարեանց։

«Ասմունք Քոռ-Օղլուն. Քոռ-Օղլին այս էր ազգաւ տաճիկ-օսման. կասեն թէ էր ի Պայաղատու երկրին. այր այս բնակէր ՚ի լեռինս և ՚ի անստառ երկրին օսմանցոց. քաղում հնծելօք պահէր անցս ճանապարհաց, երբեմն կողոպտէր զվաճառականս և երբեմն սիրով տոնուր զգրամս. իսկական բնակութիւն սորա էր Ղարսայ և Կարնոյ քաղաքի մեջտեղն, կայ մեծ մայրի, որ այժմ կանուանի Սողանլի. անդ շինեալ է բերդակ մի, որ անուանին Քոռ-Օղլի զալասի և այլ տեղիս ունի բերդո. այս էր ի ժամանակի թագաւորին պարսից Շահ-Ապասին և ի թագաւորութեան տաճկաց Սուլթան Մուրադին. սովորութիւնս սորա էր ուրախանալ և վայելել զվայելութիւնս լերանց ու անտառից. վասն ուրախութեան իւրոյ ձայնն իւր զօչէր ու շրջագայէր լերինս և

ի դաշտա ծաղկաւէտ տեղիս. ապառամբէր թագաւորին. պատմութիւն սորա բաղում է, աստ անտեղի է գրել. ամեն գեղեցիկ տղայ ևս առնալ և փախնալ էր ի քաղաքէն, վասն որոյ բաղում զովասանութիւն ասացէալ է, ըստ կարիք մնորում լու[ն]ալն աստ գրեացուք¹:

Ավելի ուշադրալ է հայ պատմագիր Առաքել Դավրիժեցու վկայութիւնը, որ ապրել է XVII դարի վերջերը, հետևապես ժամանակակից էր Քյոռ-Օղլուն, խոսելով Պարսկաստանի Շահ-Աբաս թագավորի իշխանութիւն մասին, Առաքել Դավրիժեցին հիշատակում է մի շարք փաշաների ու այլ բնիկների անուններ, որոնք XVI դարի վերջին, ու XVII դ. սկզբներին ապառամբել էին նրա դեմ:

Այդ անունների շարքում նշվում է նաև Քյոռ-Օղլի. «այս ալն Քոռօղլին է, որ բաղում խաղ է ասացեալ՝ զոր այժմ աչըղներն եղանակեն»²: Նմանապես Առաքել Դավրիժեցին հիշատակում է Քյոռ-Օղլու զինակից Դղիր-Օղլուն, որ հանդիպում ենք վիպասանութիւն մեջ: «Դղիրօղլի Մուսաֆայ բէկ Ռ [1000] մարդով, և սա ևս ընկեր է Քոռօղլայն՝ զոր յուով տեղիս ի մեջ իւր խաղին զսա յիշէ»³:

Զափաղանց հետաքրքիր է, որ Առաքել Դավրիժեցու հիշատակած փաշաների շարքում հանդիպում ենք այնպիսի անուններին, որոնք գտնվում են նաև Քյոռ-Օղլու վիպասանութիւն զանազան վարիանտներում. օրինակ՝ Անմատ փաշա, Մանմատ, Ալի փաշա: Արդյո՞ք սրանք նույն անձնավորութիւններն են թե ոչ, չենք կարող որոշակի պնդել: Բայց այն հանգամանքը, որ Քյոռ-Օղլու անունը բերվում է նրանց շարքում, անհավանական չէ, որ վիպասանութիւն ու Առաքել Դավրիժեցու պատմութիւն մեջ հիշատակված անունները կարող են միևնույն անձերը լինել:

¹ Հիշյալ երգարանը, որ պարունակում է Քյոռ-Օղլու գեղը թուրքերեն երգերով, հայտնաբերված է Յեդիսա Մուշեղյանի ձեռքարկման հետ առնչող «Дело Египаса Мусет» խորագրով արխիվային գործի մեջ, որ գտնվում է Մոսկվայի Գեոսական Գնահարոնական Արխիվում (Государственный Архив феодално-крепостнической эпохи): Վերահիշյալ քաղվածքը հանել են հիշյալ գործից ընկ. Դ. Դարբինյանը և Ա. Աբրահամյանը, որոնցից էլ ստացել է բանավորը թարգմերգյանը:

² Գառմաթիւն Առաքել վարդապետ Դավրիժեցու. 1896 թ., Վարդապատ, էջ 87:

³ Անդ:

Ուստի այս տեսակետից էլ Քյոռ-Օղլու անձի պատմականութիւնը որոշ կոման է ստանում:

Այնուհետեւ վերոհիշյալ պատմագիրը տալիս է այդ ապրտաամբների գործողութեան ու կյանքի ընթացիկ նկարագիրը, որ, իհարկեւ, վերաբերում է նաեւ Քյոռ-Օղլուն. «Մտքա ամենեքեան Զալալիք¹ էին, որք ոչ հնազանդէին թագաւորին. և ոչ ՚ի տեղի ուրեք զկայ առեալ բնակէին, այլ աշխարհաւերք և աշխարհակործանք, և ուր և լսէին զհամբաւ շինութեան, դիմեալ անդր հասանէին, աւարեալ կողոպտէին և զշինուածս հրդեհեալ այրէին»²:

Առաքել Դավրիժեցու վկայութիւնը, կարծում ենք, հավաստի արժեք ունի: Նա վախճանվել է 1670 թ., իսկ յուր պատմութիւնը գրել և վերջացրել է 1662 թ.: Ուստի պետք է եզրակացնել, որ այդ պատմագրի հիշատակած Քյոռ-Օղլին ապրել է XVII դարում, թերեւ XVI դարի վերջերին: Այս ժամանակագրութիւնը, կարծես, հաստատում է նաեւ «Քյոռ-Օղլին» վիպասանութեան տաճկերեն արկածում առաջ բերված Քյոռ-Օղլու երգով. «Քյոռ-Օղլին ևմ, 1018 թվին ցույց տվի Այվաղ խանին սարերը: Այդ տաճկական տարեթիվը համապատասխանում է մեր 1600 թվականին³: Ուրեմն այդ ժամանակ Քյոռ-Օղլին արգեն գործում էր:

Հետևապէս Առաքել Դավրիժեցու հիշատակած Քյոռ-Օղլին նույն անձն է, որ մեր վիպասանութեան հերոսն է հանդիսացել: Առաքել Դավրիժեցու վերոգրյալ վերջին խոսքերը նույնպէս զալիս են հաստատելու մեր այն ենթադրութիւնը, որ Քյոռ-Օղլին աստանդական կյանք էր վարում իր զինակիցներով, որի հետևանքով էլ զանազան երկրներում նրա անունով այնքան բազմաթիվ բերդեր են այժմ հիշատակվում ժողովրդական ավանդութիւններում:

III

Ահա պատմական անձնավորութիւն հանդիսացող այդ Քյոռ-Օղլին է, որի շուրջը հյուսվել է հերոսական վիպասանութիւն, որպիսին հանդիսանում է աղբրեջնայան բանավոր գրա-

¹ Բնորոշ է, որ Զալալի ցեղից Քյոռ-Օղլու ծագելու մասին նշվում է նաեւ վիպասանութեան մեջ:

² Անդ:

³ Աշըղ-Զամալի — Քոռօղլու հերյաթը, մասն 1, Թիֆլիս, 1898 թ., Առաջաբան, էջ 2:

կանուխան զնդեցիկ ստեղծագործութիւններէց մեկը: Այդ վիպասանութիւնը մեծ չափով հազեցված է սոցիալական մտախնդրով, և այդ հանգամանքի մեջ է թաքնված նրա համատարած ժողովրդականութիւնը: Ազրբեջանյան ժողովուրդը, որ հեծում էր քաղաքական ու տնտեսական ճնշումների տակ, իր աշուղներէ ընդանով զրոհուել է այն սոցիալական պայքարը, ազատագրական շարժումը, որ նա երկար դարեր վարել է ամեն տեսակ բռնակալների ու կեղեքողների դէմ: Նիւն բռնութիւն ճանկերում դաւարիւղ ժողովուրդը միայն երբեմն օրհասական մոմենտներին էր խիզախում գլուխ բարձրացնելու և բմբոստանալու, որը, իհարկէ անմիջապէս խեղդվում էր ուժեղ բռնեցքով, ապա այդ նույն ժողովուրդն իր ներքին ապրումներում, իր կենսական պայմանները քիչ թե շատ բարելավելու ձգտումներում և վերջապէս դեպի բռնակալները տածած ատելութիւնն ու վախի գաղտնածածկ զգացումներում՝ միշտ վառ էր պահում բորբոք մի հուշ: Դա այն հուշն էր, թե նրան ճնշող իշխանները, կեղեքող ֆեոդալներն ու շահագործողները պետք է մի օր ստանան իրենց արժանի պատիժը, թե ինքն իր մեջ թաղցրած ունի պոտենցիալ ուժեր, որոնք հերոսական քաջագործութիւններով պաշտպանելու և փրկելու են նրան:

Ահա այս մտորումներն ու տենչերն են մարմնացել Քյոռ-Օղլու անձնավորութիւնն մեջ, որին ժողովուրդը բնականորեն իզեալացրել է և պարուրել հեքիաթային հերոսական գործերով ու հոգեկան խառնվածքով: Կարող էր պատահել, որ իսկական պատմական Քյոռ-Օղլին օժտված չլիներ այդ բոլոր արժանիքներով: Բայց սոսկ այն հանգամանքը, որ նա ապստամբել էր թագավորների, փաշաների ու խաների դէմ, որ նա անխնա թաւանում էր վաշխառու վաճառականներին, որ նա անդադար խիզախ կռիւ էր մղում իր հակառակորդների դէմ, բավական է, որ նրա դեմքը ծածկվեր հմայքով և ժողովրդական մասսաների երեակայութեամբ նրա անձնավորութիւնն մեջ մարմնանար ազատարար հերոսը, դառնալով «Քյոռ-Օղլի» վիպասանութիւնն հիմնական տոանցքը: Այսպէս է հյուսվել Քյոռ-Օղլու կյանքն ու գործունեութիւնը ժողովրդական բանահյուսութիւնն կամ, ավելի հիշատակաւոր խոսքով, ստեղծագործութիւնն մեջ:

Սակայն «Քյոռ-Օղլի» վիպասանութիւնն պատմական կողմը միմիայն այդ հերոսի անձնավորութիւնն մեջ չէ: Այդ վիպասանութիւնն արտացոլել է իր ժամանակվա սոցիալական ու քա-

դաքական միջավայրը Այդ վիպասանությունը գոյացել ու դար-
դացել է մի ուշադրով էպոխայում, երբ Առաջավոր Ասիան դար-
ձել էր սուր հակամարտի ասպարեզ երկու գերագանց բռնակալ
դեսպոտների, այն է՝ Իրանի Շահ-Աբասի և Թյուրքիայի Սուլ-
թան-Մուրադի միջև

Ադրբեջանը, ինչպես և Հայաստանն ու Վրաստանը, ենթա-
կա էին նրանց արյունալի արշավանքներին ու դարձել էին հա-
րառե սասպատակումների, ավերումների անսպառ աղբյուր։ Այդ
երկու արյունոտ զոհողությունների փոփոխակի հարվածների
տակ զլխավորապես տուժում էր Ադրբեջանի, Հայաստանի ու
Վրաստանի գյուղացիությունը, որն առանց այն էլ հեծում էր
տեղական ֆեոդալների կեղեքումների ներքո և այժմ խառն
քայքայվում էր տնտեսապես։ Ավելացնենք այստեղ նաև առևտը-
րա-վաճառական կապիտալի շահատակությունները։ Այդ
ժամանակներն առևտրական կապիտալը մեծ դեր էր խաղում
Առաջավոր Ասիայում և մասնավորապես Անդրկովկասի սահման-
ներում, որտեղ խոշոր առևտրականները վայելում էին շահերի,
սուլթանների, խանների ու փաշաների հովանավորությունը և,
օգտվելով մենաշնորհ արտոնություններից, տարածում էին իրենց
շահագործությունն ու վաշխառական ցանցը ժողովրդի բոլոր
խավերում։ Առևտրա-վաշխառական կապիտալի դերի մասին
գաղափար կազմելու համար բավական է հիշել միայն Ջուղայի
հայ վաճառականության ու Շահ-Աբասի միջև ստեղծված հարա-
բերությունները։

Այս քաղաքական ու տնտեսական ծանր պայմաններում
տանջվող ժողովուրդը, անշուշտ, պայքար էր մղում օտար նվաճողնե-
րի ու տեղական ֆեոդալների բռնությունների դեմ։ Այդ պայքարը,
ըստ բանահյուսության, արտահայտվել է առանձին հերոսների մեջ,
որոնք համախմբելով իրենց շուրջը զժողոններին ու վրիժառու-
ներին, խիզախում էին կռվի ելնել աշխատավորների շահերի
պաշտպանության համար, հաղթածներն ուղղելով խաների, փա-
շաների, բեկերի և այլ բռնակալների դեմ, և թալանելով վաճա-
ռականներին, վաշխառուներին ու ամեն տեսակ շահագործող-
ներին։

Այդ ըմբոստ հերոսները հնչված ու բռնադատված ժողովրդի
հարազատ զավակներն էին, ընկճված, շահագործվող դասակարգի
շահերի պաշտպանները և նրանց անունից վրեժխնդիր ու ան-
խնա էին դեպի արքայետող դասակարգը։ Ահա այդ քաջամարտիկ

հերոսներից մեկն էր նաև Քյոռ-Օղլին, որի անձնավորության մեջ վիպասանությունը պատկերել է ժողովրդական շահերի պաշտպանի իդեալը, խաների ու փաշաների դեմ մղվող պայքարի ու ատելության ցայտուն մոմենտները:

Ինչպես է պատկերանում Քյոռ-Օղլու հերոսական անձնավորությունը ժողովրդական նույնանուն վիպասանության մեջ: Այստեղ մենք աչքի առաջ ունենք այդ վիպասանության հայերեն վարիանտները:

Քյոռ-Օղլին քաջ ու անվնաս մարտիկ է, ժողովրդական սիրված հերոս, հպարտ ու անընկճելի ասպետ, որ անսասան ուղղում էր իր զենքը՝ սուրն ու նիզակը ժողովրդի կեղեքողներին, ճշդողների ու բռնակալների դեմ, բայց իր զենքի հետ միասին նա վարժ արհուլում էր իր սաղին. նա ոգևորված աշուղ է, որ իր հորինած երգերով ծագրում և դատափետում էր իշխողներին, մարտակոչ ուղղում իր դավիաներին ու ըմբոստ տարերերին, փառաբանում իր Ղաթ ձիուն, սիրո զովք ներբողում իր Նիգյարին և այլ ղեղեցկուհիներին: Նա անձնագործ պաշտպան է չքավորին, ռայաթին և նույնքան անխնա ու վրիժառու ղեպի արհալետողներն ու բռնակալ իշխանները, հարուստներն ու վաճառականները:

«Զալումին կըճարտեր, ախլտին կըսիրեր,
Զանկինից կառներ, ֆուկարին կըտար»:

Քյոռ-Օղլու այդ ներհակ տրամադրությունը ղեպի արհալետող դասակարգը բղխում էր ոչ թե անձնական պատճառներից, որպես վրիժառություն իր հոր աչքերը կուրացնելու համար, այլ արեղ անարդարությունից, կեղեքումներից, որ վրձակված է եղել աշխատավոր մասսաներին, ռայաթին, նոջարներին, որոնց թվին էր պատկանում նաև նրա հայրը: Քյոռ-Օղլու ատելությունն ու կատաղի կոխվել, ասպատակություններն ու թալանները աշխարհի ուժեղների վերաբերմամբ բղխում էր նրա սոցիալական աշխարհայեցողությունից, որ ներշնչել էր նրան իր հայրը:

«Որթի, տու խոսար քու մուրատին.
Մնաց վեր քո բախտին, անվախ սրտին.
Որթի Առշամ, չխնայես քո դուշմանին,
Նա ճուշին խալֆին, նա շահ-սուլթանին»:

կարճութունն արա, տառցի հարամի,
Սպանի, թալլի խոճին, հարստին.
Աղեկութուն արա խղճին, աղքատին.
Էտա իմ նասյաթ:

Ահա այս կտակը հանդիսանում է սոցիալական մի պատ-
վեր, հիմնական ուղեցույց, որով ղեկավարվում էր Քյոռ-Օղլին
մինչև իր մրրկալի կյանքի վերջը: Նույն զգացմունքներով ու
մտածումներով են տոգորված նրա շուրջը խմբված դավիթներն ու
ըմբոստ տարբերը, որոնք անբաժան իրենց ղեկավարից հանդիսա-
նում են ճշմտմաների ու կեղեքվողների պաշտպաններ: Այդ դա-
վիթներն էլ լցված են ասելու թյամբ ու վրեժխնդրությամբ գեպի
խաները, փաշաներն ու բեկերը, որոնց ճնշումներից ու կամայա-
կանություններից իրենք էլ են սուժել:

«Մենք աշխարհի էն թայֆան ենք, որ լծի տակ չենք
մընելի» — ահա նրանց նշանաբանը:

Այդ դավիթները միշտ օգնության են հասնում ռայաթին:
Քյոռ-Օղլու կարգադրությամբ դավիթները հնձում են անօղնական
հալիօրի արարը: Քյոռ-Օղլին ու դավիթները իրենց ավարներից,
մանավանդ վաճառականներից թալանած ապրանքներից մասն
են հանում և բաժանում չքավորներին:

Նույնիսկ կալվածատեր խաններից ու բեկներից խլած հողերն
ու շուրը բաշխում են նրանցից ազատագրված ճորտ գյուղացի-
ներին: Դա հետևանք է այն ցասկոտ բողոքի, որ շահագործվող
ճորտերը, հողազուրկ կամ սակավահող գյուղացիներն ուղղում են
իրենց աղաների դեմ:

«Ապա քեզ ով է իրավունք տվե, էնքան անհուն խողեր
զավթել նստել ես. էնքան բիթուն խող ճուր քե, էտ մե չվան
տեղն էլ ծի»:

Ժողովուրդը, ռայաթը անհուն երախտիք է տածում դեպի
Քյոռ-Օղլին ու նրա դավիթները, համարելով նրանց հարազատ ու
իրենց սրտին մոտիկ: Գյուղացիները գիմում են Քյոռ-Օղլուն
խնդրելով իրենց ազատել «Բատրխան բեգի զուլումեն»: Հասան-
փաշայի զորքը՝ «զոշուն ռայաթը» հրաժարվում է կռվել Քյոռ-
Օղլու դեմ, որովհետև Քյոռ-Օղլին էլ միշտ ռայաթի կողմն է պա-
հել և չի կոտորել «զոշուն-ռայաթին», որ բռնի ստիպված է եղել
ծառայելու իշխաններին:

Վերջապես վիզաասանությունը մարդկային լավագույն բարո-



յական գծերով է ներկայացնում Քյոռ-Օղլուն։ Քյոռ-Օղլին չի կարող տանել սուտը, խարեությունը, կեղծավորությունն ու դավաճանությունը, որ միայն «նամարդին» է վայել։ Այդպիսիներին նա անխնա հալածում, ոչնչացնում է։ Ընդհակառակը, անձնվիրությունը, շիտակությունը, բնկերական սերը, վեհանձնությունը, երախտադարտությունը նրա խառնվածքի գլխավոր հատկություններն են, որոնք նա խրախուսում է նաև ուրիշների մեջ։

Ահա այսպես են անդրադարձել «Քյոռ-Օղլին» վիպասանության մեջ բռնակալության ու շահագործման ճիրաններում գտնվող ժողովրդի ազատագրական տենչերը, ներքին տարուհներն ու ամբողջ ներհակությունը դեպի արբազնազոր դասակարգը, մարմնասլուծ Քյոռ-Օղլու հերոսական անձնավորությամբ։

IV

«Քյոռ-Օղլին» վիպասանությունը, որ այնքան մեծ ժողովրդականություն է վայելում Անդրկովկասում, մասնավորապես Ադրբեջանում, իրեն ազգային հերոսի մի երգ, խոր արմատներ է գցել նաև հայ ժողովրդական դանդախներում։ Այդ վիպասանությունն իր սոցիալական տաադձով միանգամայն ներդաշնակում է հայ աշխատավոր, մասնավոր գյուղացիական մասսաների հոգևոր ու մտավոր ապրումներին։ Հայ ռայաթն էլ մյուսներին, իր հարեան ժողովուրդներին հետ միասին հավասարապես շահագործվում էր խաների, բեգերի, փաշաների և այլ նման ֆեոդալների ձեռքով, նա էլ էր հեծում դանազան մեծ ու փոքր բռնակալների ճանկերում։ Ուստի զարմանալի չէ, որ «Քյոռ-Օղլին» վիպասանությունն այնքան հարազատ է դարձել հայ ժողովրդական մասսաներին և հայ աշուղների ստեղծագործության մեջ առաջնակարգ տեղ է գրավել։ Այդ հարադատությունը պետք է վերագրել այն, որ մեզանում առաջացել են «Քյոռ-Օղլին» վիպասանության բավական մեծ թվով հայերեն վարիանտներ, որոնց մի մասը հայ աշուղական թարգմանություններ են, իսկ մյուս մասը տեղական կոլորիտով ու հայ ազգադրական գծերով վերամշակումներ են բարձր բանաստեղծական ավելանով օժտված հայ աշուղների կողմից։ Այդ հարադատությունն երբեմն այնքան հետև է գնում, որ, անտարակույս, ազրբեջանական հերոս Քյոռ-Օղլին էլ դառնում է հայ հերոս։

Այդ կողմից ուշագրավ է Վանի բարբառով վարիանտը։

Այստեղ թե գործող անձերը և թե գործողության վայրերը հայկական են: Քյոռ-Օղլու հայրը ոչ թե Հաջի Ալին է, ինչպես մյուս վարիանտներում, այլ հայ է՝ Հարութ անունով, Վասպուրականի Հայոց Զորի Անկշտան գյուղից: Որդին կոչվում է Առշամ, փոխանակ Ռուշանի, որ հետո վերանվանվում է Քյոռ-Օղլի: Քյոռ-Օղլու կոիվները տեղի են ունենում այն պատմական դաշտավայրում, որ ժողովրդական ավանդությունները կապում են Հայկ ու Բել դյուցազնների պատերազմի հետ, որպիսի ավանդությունը տեղ է գտել Մովսես Խորենացու «Հայոց պատմություն» մեջ: Բայց բնորոշն այն է, որ ամբողջ վիպասանությունը հազեցած է զուտ հայկական ֆոլկլորով ու կենցաղային սովորույթների նկարագրություններով: Բավական է միայն նշել հարսանիքի մանրամասն նկարագիրը յուրահատուկ ձևերով ու ժողովրդական հարսանեկան երգերով, որոնք իրենց ազդագրական բովանդակությամբ հիմնականում պատկերացնում են Վասպուրականի հայ ժողովրդական կենցաղը: Քյոռ-Օղլու Ղաթ ձին էլ իր ամբողջ պատմությամբ կապվում է Վասպուրականի Նազիկ և Սաչլու լճակների հրեղեն ձիերի մասին ժողովրդական առասպելաբանության հետ, որ մեղ ավանդում են ազգագրական բանահավաքները¹:

Երբեմն այն տպավորությունն է ստացվում, որ այս վիպասանությունները, կորիզ ունենալով Քյոռ-Օղլու, ազդեցության այդ հերոսի պատմության սյուժեն, այնքան է կերպարանափոխվել հայկական միջավայրում, որ կարծես, ոչ թե մի առանձին վարիանտ է հանդիսանում, այլ հայ ժողովրդական բանահյուսություն տեսագծերով վերակառուցված մի նոր հերոսական վիպասանություն, որ հիշեցնում է «Սասնա ծռեր»-ը:

Գրեթե նույնը կարելի է ասել Մոկաց բարբառով վարիանտի մասին:

«Քյոռ-Օղլի» վիպասանության այդ տեսակ ազգայնացումը բնորոշ է այն վարիանտներում, որոնք զարգացել են Նախկին պատմական Հայաստանի հարավային մասում, այն է Քյուրդահայաստանում: Ընդհակառակը, այն վարիանտները, որոնք հասել են Պարսկահայերից՝ Ասրպատականից և ներկայումս Կոտայքում, Ղամաղվում և Դարալագյազում վերաբնակված պարսկա-

¹ Գրեթե Մովսես Խորենացու «Հայոց պատմություն», էջ 86. նաև Ե. Լալայան՝ «Ազգագրական հանգես», հ. VI, էջ 41:

հայ դադթականների միջավայրումն են պատմվում կամ երգվում, պահպանում են Քյոս-Օղլու, որպես Ադրեֆյանի ժողովրդական հերոսի պատկերը։ Այնուհանդերձ, այս վարիանտներումն էլ որոշ չափով անդրադարձել է հայ ժողովրդական միջավայրն իր տեղական ապրումներով։ Այդ տեսակետից ուշադրության արժանի է իր շարահյուսական կառուցվածքով ու ուսմական փխխտությամբ Սալմաստի հայերեն վարիանտը, որն իր ամբողջությամբ ամենալրիվն է ու ընդարձակը ներկա հրատարակության մեջ։ Այստեղ ցայտուն կերպով դրսևորվում է Քյոս-Օղլու դեմքը, որի մեջ խառցել է ժողովրդի դեմոկրատական տողորմանքի իդեալը. այդ վիպասանության մեջ արտացոլվել է ժողովրդական փխխտությամբ յուենը՝ կյանքի հարուստ գիտողություններով, խորհրդածություններով ու աշխարհայեցողությամբ։

Ներկա հայկական վարիանտները մեծ արժեք են ստանում նրանով, որ ոչ միայն գալիս են մի անգամ ևս ապացուցելու Քյոս-Օղլու անսահման ժողովրդականությունն ու հմայքը Արևելքի երկրներում, այլ և նրա հերոսական անձի իմտերևացիալականությունն Արևելում։ Քյոս-Օղլին, իբրև պատմական անձնավորություն, իր ծագումով ադրեֆյանցի է, նրա հերոսական դեմքի շուրջը շարահյուսված վիպասանությունը. անտարակույս, թե ժամանակագրորեն և թե աշխարհագրական տվյալներով հիմնականում ադրեֆյանյան է։ Սակայն, «Քյոս-Օղլին» վիպասանությունը լայնածավալ կերպով տարածվել է Արևելքի զանազան երկրներում ու գունավորվել տեղական միջավայրի էությունով։ Նվաճա պարսկական միջավայրում Քյոս-Օղլին պարսիկ է դառնում, օսմանցիների մոտ՝ օսմանցի, քրդերի մեջ՝ քուրդ և վերջապես հայերի մոտ, մասնավորապես յուրաքանչյուր ստանում՝ հայ։ Այս բնորոշ հանգամանքը վկայում է, թե որքան մոտիկ ու հարազատ է եղել «Քյոս-Օղլին» վիպասանությունն իր սոցիալական մոտիվներով, իր հասարակական ապրումներով զանազան ազգություններին պատկանող ժողովրդական մասսաներին։

Արևելքի միևնույն քաղաքական բռնակալության ու տիրողների կամայականությունների տակ գալարվող, միևնույն սոցիալական անարդարությունների և տնտեսական անդուստղ շահագործումների ու կեղեքումների ներքո ճնշված ժողովրդական զանգվածները, անկախ իրենց ազգային պատկանելությունից, միևնույն դասակարգային ատելությամբ ու ներհակությամբ են բորբոքվել և իրենց պաշտպանի իդեալական դեմքը մի հայտա-

բարի են բերել Քյոռ-Օղլու հերոսական անձնավորության մեջ։ Ահա այստեղ է խորացած «Քյոռ-Օղլի» վիպասանության այն կորիզը, սերմը, որից անել է նրա ինտերնացիոնալ բնույթը։

«Քյոռ-Օղլի» վիպասանության ժողովրդականությունն իր վրա է դարձրել նաև գեղարվեստական գրականության ներկայացուցիչների ուշադրությունը։ Տակավին 1856 թ. բանաստեղծ Ռաֆայել Պատկանյանը (Գամառ-Բաթիպա) ձեռնարկել էր «Քյոռ-Օղլի» վերնադրով վիպասանությունը նյութ առնելով ժողովրդական վեպը։ Այդ վիպասանությունը, որ գրված է տաղաչափությամբ և աշուղական բնորոշ ոճով, մնացել է անավարտ¹։

Նմանապես, բանաստեղծ ու վիպագիր Ղազարոս Աղայանը հրատարակել է արձակ փոխադրությամբ մի քանի դրվագներ «Քյոռ-Օղլի» վիպասանությունից, այն է՝ «Քյոռ-Օղլին չաղացական»², «Քյոռ-Օղլու թուրը»³ և «Քյոռ-Օղլին կալանավոր»⁴։

Այնուհետև աշուղ Ջամալին (Մկրտիչ Տալյանց), ցանկանալով Քյոռ-Օղլու վիպասանությունը մատչելի դարձնել հայ ընթերցող հասարակության համար և, երևի անգիտակ լինելով, որ գոյություն ունեն նրա հայերեն վարիանտները, ձեռնարկել էր այդ վիպասանության թարգմանությանը տանկերենից։ Նրա թարգմանությունը այդ վիպասանության միայն եղևը դրվագներն են, որ նա վերածել է գրական լեզվի ու հրապարակել երկու պրակներով⁵։ Թարգմանությունը կատարված է արձակ ոճով և միայն երգերն են չափածո։

Վերջապես հիշատակենք աշուղ Հայաթի հրատարակած փոխադրությունը տանկերենից՝ «Պոլիբեգ—Քյոռ-Օղլու հեքիաթ»-ներից մեկը⁶։

¹ Ռաֆայել Պատկանյանի «Ընտիր երկամիջոցությունները, խմբագրությամբ Գր. Խալաթյանի, հատ. 1, Մ. Պետերբուրգ, էջ 50—56։

² Աղբյուր, ամսագիր, 1887 թ. № 4։

³ «Տարազ» շաբաթաթերթ, 1890 թ. № 5։

⁴ «Մուրճ» ամսագիր, 1893 թ., № 2. հետագայում հիշյալ 3 դրվագները հրատարակվել են առանձին մի գրքույկով։

⁵ «Քյոռ-Օղլի» հեքիաթը, Գլխի-Օղլու և Պոլի-Բեկի հետ պատահած անցքերը, մասն 1, Թիֆլիս, 1898, «Քյոռ-Օղլու» հեքիաթը Դամբլի-Օղլու և Համդարեկի հետ պատահած անցքերը, մասն II, Թիֆլիս, 1904 թ.։

⁶ Ալեքսանդրապոլ (այժմ Լենինական), 1900 թ.։

Ներկա հրատարակութեամբ «Բյուռ-Օղլի» վիպասանութեան լույս տեսնող վարիանտները գրի են առնված աշուղական գրականութեանը քաջածանոթ Գ. Թարվերդյանի ձեռքով՝ զանազան պատմողներից ու տարրեր բարբառներով, այն՝ է խոյի, Սալմաստի, Բաշղալայի, Դարալագյաղի, Վանի, Մոկաց, Կոտայքի, Վաղարշապատի և այլն:

Այդ պատմողները, ինչպես անկներև է վարիանտներին կցված կենսագրական համառոտ տեղեկութեաններից, արդեն վաղուց գաղթելով, վերաբնակվել են Սովետական Հայաստանի սահմաններում: Նրանք որոշակի ազդվել են մասամբ իրենց նոր միջավայրում տիրող գաղափարաբարբառից, մասամբ էլ հայ գրական լեզվից: Ուստի գրի առնված վարիանտներում չի պահպանվել անաղարտութեամբ համապատասխան բուն բարբառի բառապաշարը, որ հաճախ խճողվում է նորամուտ բառերով. օրինակ՝ բոթուլ (бутыль), զահուլ (закон), աթկաղ (отказ), պապրոս (папироса), մշտուկ (мундштук), կապեկ (копейка), «կամալանի կապեն» (ընկերություն անեն), «ֆորմով-ֆաստնով» և այլն: Նմանապես բաղմաթիվ են հայերեն գրական բառեր, օրինակ՝ հորինել, գնահատել, միջոցով, անարդանք, կաշառք, ավարտել, որոշել, շնորհակալություն հայտնել... կամ նորագույն օտար բառեր՝ դրապ, կանիֆոս, բրիլյանտ և այլն:

Անտարակույս, այս հանգամանքը որոշ չափով նվաստացնում է վիպասանութեան վարիանտների արժեքը լեզվագիտական ու բարբառագիտական տեսակետից: Մենք հարմար չդատեցինք խմբագրական ուղղումներով փոխել նորամուտ բառերն ու արհեստականորեն վերականգնել բարբառի հարազատությունը: Դա կլիներ մի ընդադրոսիկ քայլ, որ հարվածում է պատմվածքի, վիպասանութեան այն բնականութեանը, որով նա արտահայտվում է ժողովրդական լեզվում, թեկուզ հենց բարբառական սինկրետիզմի կամ վերասերման ձևերով, ինչպիսի պրոցեսում էին գտնվում վերջին ժամանակ հայ զանազան բարբառները, աշխարհագրորեն փոխելով իրենց միջավայրը: Այսու հանդերձ ներկա հայ վարիանտները հարաբերական չափով նշանակություն կունենան բանասեր-բարբառագետի համար: Մասնազետ բանասերն առանց դժվարության կնկատի բարբառական խո-

ստորումները և ըստ արժանուէյն կշնահատի վիպասանութեան վարիանտներէ արժեքը, ինչ չափով որ նրանց մեջ պահպանված են այս կամ այն զանազան լեզվական հարստութիւնները:

Սակայն այդ բարբառային խոտորումները բացասաբար չեն ազդում «Բյոռ-Օղլի» վիպասանութեան գեղարվեստական-բանաստեղծական և մանավանդ սոցիալ-պատմական արժեքի վրա: Եվ ներկա հրատարակութեամբ մենք նպատակ ենք ունեցել ծանրանալ «Բյոռ-Օղլի» վիպասանութեան հենց այդ սոցիալ-պատմական նշանակութեան վրա, որ պատկերացնում է Արևելքի, մասնավորապէս Անդկովկասի, Ֆեոդալական դարաշրջանի հասարակական հարաբերութիւնները, տարբեր ազգութիւնների աշխատավորու ճնշված խավերի մտորումների և ձգտումների ներքին ինտերնացիոնալիստական կապը, քաղաքական որոշ մոմենտները, ժողովրդական բազմերանգ կենցաղը, և այդ ամենը բեկված գեմուրատական խավերի ստեղծագործական գիտակցութեան մեջ:

Վերջում պետք է նշել, որ հայերեն վարիանտների ներկա հրատարակութիւնը հանդիսանում է մի հստաքրքրական, եթե չասենք, արժեքավոր ներդրանք մեր հարեան եղբայրական ժողովուրդների և առաջին հերթին Ադրբեջանի կուլտուրայի պատմութեան մեջ:

Խ. Սալվեյան

ПРЕДИСЛОВИЕ

I

Закавказье, где под сенью советской власти ныне цветут братские республики: Азербайджан, Армения и Грузия, является неисчерпаемым хранилищем безыскусственного словесного творчества, которое вылилось в произведениях народного эпоса и поэзии. Некоторые из этих народных эпических и поэтических произведений зародились в седой старине и, пройдя многовековой путь, продолжали далее развиваться и еще поныне звучат как живые памятники, где отразилась народная историческая жизнь со всем ее бытием.

Каждая из народностей Закавказья внесла свою долю в эту поэзию и эпос, участвовала в создании пышного фольклора, который является показателем духовных сил, таившихся в народных недрах. Каждая из этих народностей имела своих отдельных героев, в образе коих воплощала свои переживания и чаяния, переливы своего мироощущения и мировоззрения, многовековую свободолюбивую борьбу против всякого рода властителей, угнетателей и эксплуататоров.

Однако, если каждая эта народность облакала свои поэтические и эпические творения в своеобразный характерный колорит, если она придавала собственную национальную форму тем образам и действиям, которые фигурировали в ее фольклоре, то социальные противоречия, тирания завоевателей и политическое тяжелое положение, будучи в одинаковой мере чувствительными всем народностям Закавказья, создали однородный для них политический фон, где борьба и ведущие идеалы носили аналогичный характер.

Грузинский народ имеет свое знаменитое творение — «Витязь в тигровой шкуре», которое хотя родилось под пером поэта Шота Руставели, однако в его гениальном эпическом произведении окристаллизовались словесные сокровища из народных источников, выразительные черты героизма, благородной любви, рыцарства, сентенции народной мудрости.

Армянский народ имеет свой эпос — «Давид Сасунский», 1000-летний юбилей которого был отпразднован в 1939 г. Эпос этот — чисто фольклорное произведение, которое в своей простой и несложной конструкции представляет образными чертами древнюю бытовую среду с ее крестьянским патриархальным мировоззрением, с ее социальными противоречиями, с ее любимыми героями в легендарном окружении. Эпос «Давид Сасунский» возник на основе социально-политических переживаний, когда армянский народ неоднократно восставал на многовековую героическую борьбу

против гнета и эксплуатации арабских завоевателей (VII—X в. в.), борьбу, где ярко отразились доблесть и свободолюбие сасунских крестьян.

Азербайджанский народный эпос также создал „Кер-Оглы“ — героическую эпопею, где отразились наилучшие черты народного характера. Это произведение безыскусственного словесного творчества нашло достойную оценку и приобрело культурную ценность лишь при советской власти благодаря ленинско-сталинской национальной политике. Необъятный Советский Союз сумел объединить братскими связями многочисленные народности, которые получили возможность развить свои унаследованные культурные ценности и создать новую культуру, национальную по форме и социалистическую по содержанию. Такой именно высокой оценки удостоился азербайджанский эпос „Кер-Оглы“. Собираются многочисленные, рассеянные по всем углам Закавказья варианты этого эпоса на разных языках, редактируются и готовятся к печати. Эпос „Кер-Оглы“ послужил также текстом для азербайджанской национальной оперы, созданной на мотивах народной музыки и пения.

Эпическое произведение „Кер-Оглы“ не представляет собой индивидуальное творчество. Оно является плодом повествований и песнопений ашугов (народных певцов), которые по наследству передавали устно в течение веков из поколения в поколение и вместе с тем развивали его содержание. Поэтому, это произведение, строго говоря, нельзя причислить к народному фольклору. Тем не менее оно всецело является народным: насыщено характерным колоритом народного словесного творчества, своеобразными чертами народного мировоззрения. Нам не известны имена ашугов, авторов этого эпоса, и никогда не будут известны, так как их лица расплылись, амальгамировались в беспредельном народном массиве, где повествование о Кер-Оглы разлилось многочисленными вариантами на различных языках: азербайджанском, турецком (османском), армянском, курдском и пр.

Однако в одном из вариантов упоминается, что автором эпоса будто был ашуг Джунун, постоянно пребывавший у Кер-Оглы. Согласно эпическому повествованию, Кер-Оглы, напав на караван купцов и разграбив их, спас ашуга Джунуна, который был заключен в особом ящике. Ашуг из признательности к своему освободителю решил остаться навсегда при Кер-Оглы и своими песнями прославлять его жизнь и героизм. Это — конечно, лишь легендарное предание, где ядром истинной действительности становится тот факт, что вообще авторами этого эпического произведения являются народные певцы-ашуги.

Нет никакого сомнения, что базой эпоса „Кер-Оглы“ была историческая действительность, которая послужила в свое время сюжетом для песнопений и повествований ашугов. Тот характерный штрих, что Кер-Оглы в нашем эпосе наряду с рыцарскими доблестями обладает также даром ашуга, певца-импровизатора, и прекрасно играет на сазе (музыкальный струнный инструмент), сигнализирует на активную роль ашуга в создании этого эпического произведения. Очевидно, отдельные песни, рассеянные в различных вариантах и приписываемые авторству Кер-Оглы, на самом деле исходят от старинных ашугов.

Следует предположить, что творческий процесс ашугов вокруг эпоса Кер-Оглы длился до начала XIX столетия. Этим именно объясняется дошедшее до нас множество вариантов, где на старинных, первоначальных подлинниках наслонились в дальнейшем новые эпические и поэтические импровизации или же старинные, подлинные песни и повествования подверглись в локальных условиях разных стран изменениям, а порой даже искажениям. Впоследствии, начиная с XIX века, ашугские сказания, в лучшем случае, старались преемственно сохранить унаследованные от старых поколений разные варианты эпоса без изменения.

Эти обстоятельства в настоящее время диктуют полностью собрать и записать все варианты эпоса „Кер-Оглы“, редактировать, систематизировать их, при этом выявить подлинные, старинные и основные оригиналы, удалив чуждые наслонения. Таким путем, пожалуй, возможно будет восстановить цельную, единую конструкцию подлинного монументального эпоса „Кер-Оглы“, каковая задача, нам кажется, лежит на обязанности научных специалистов, занятых изучением названного эпоса.

II

Основное сюжетное ядро эпоса „Кер-Оглы“ почти неизменно и одинаково повторяется во всех вариантах.

Кер-Оглы, носивший в юности имя Рушан, имел отца по имени Мирза-Серраф (в некоторых вариантах — Али). Последний сорок лет верною служил феодалу Ассан-хану в должности главного конюшего. Мирза-Серраф заботливо растил и холил в табуле Ассан-хана между прочими конями также жеребенка от „жар-коня“. Жеребенок этот вначале имел очень неказистую наружность. Ассан-хан, однажды заметив среди своего отборного табуна такого некрасивого и невзрачного жеребенка и не выня заверениям конюшего о чудесном происхождении жеребенка, сильно разгневался и счел постыдным для себя иметь подобного коня. Он повелев строго наказать конюшего, лишив его зрания и против со службы. С тех пор Рушан стал называться „Кер-Оглы“, т. е. сын слепого.

Несчастный слепой конюший уходит от безжалостного хана вместе с сыном, затанчившим жадную месть к хану, ослепителю отца. Они забирают с собой и жеребенка, носившего кличку „Храт“, т. е. каштановый цвет. За это время жеребенок вырос, стал чудесным сказочным конем, быстроногим, как ветер, разумным, как человек. „Храт“ сделался неразлучным товарищем Кер-Оглы, предметом его любви и надежд, благодаря которому Кер-Оглы стал непобедимым героем.

Кер-Оглы, после смерти слепого отца, уже возмужал и, вскормленный его наказаниями, пылал местью не только против Ассан-хана, но и против всех ханов, пашей, беков, жестоко обращавшихся со своими подчиненными и безжалостно эксплуатировавшими трудовой и бедный народ. Равным образом он был неприязненно настроен против купцов, которые ростовщицеством и обиранием накапливали свои богатства.

Собрав вокруг себя несколько десятков, а то и сотен подобных себе храбрых и смелых товарищей-соратников—„далин“, которые также враждебно были настроены против властителей, угнетателей и эксплуататоров, Кер-Оглы стал их главарем и вместе с ними устроился в неприступной крепости „Шамли-бел“.

Отсюда Кер-Оглы во главе своих товарищей совершал постоянные наезды: нападал на ханов и пашей, убивая их, грабя их области, нападал на купеческие караваны, забирая их товары и богатства, часть которых он дарил бедным крестьянам. Равным образом из почве любовных приключений он умыкал из ханских дворцов красавиц-дочерей, которые затем становились женами его товарищей. Целый ряд рыцарских приключений, нападения и грабежи, месть и убийства, геройские подвиги и поединки, храбрость его соратников и верность их к своему вождю, чудесные качества „Храга“, защита обездоленных и при всем этом доблестная личность Кер-Оглы—составляют всегда главные мотивы этого эпоса.

Широкая популярность эпоса и возвеличение геройской личности Кер-Оглы среди закавказских народностей, а также упоминаемые имена шахов, пашей, названия городов, рек и прочих местностей—естественно выдвигают вопрос об историчности повествуемых событий и лиц, особенно же личности Кер-Оглы.

Проблема об исторической личности Кер-Оглы все еще остается неразрешенной. Однако целый ряд данных приводит нас к более чем вероятному предположению, что действительно в XVII столетии существовала личность по имени Кер-Оглы, пользовавшаяся огромной славой.

В азербайджанских и турецких вариантах эпоса упоминается, что Кер-Оглы по происхождению был туркменом, из племени Тук, и его отец служил у султана Мурада*. Однако, если наш эпос, как поэтическое творение ашуга, может не представлять реальной действительности, но зато имеются о Кер-Оглы в Персии, Турции и Закавказье предания и легенды, содержащие более или менее правдоподобное историческое основание.

Согласно этим преданиям, Кер-Оглы происходил из северного Хорасана (Персия) и жил во второй половине XVII века. Его имя стало пользоваться славой с тех пор, как он начал нападать и грабить купеческие караваны, которые шли по торговому тракту из Персии в Турцию, между городами Хой и Эрзерум**. По другой версии Кер-Оглы был османского происхождения из города Банзета.

С именем Кер-Оглы связаны многочисленные развалины крепостей, доныне рассеянных в Турции, Персии, Азербайджане, Армении и Грузии. Как выше отмечено, замок Кер-Оглы назывался „Шамли-бел“, который во всех вариантах эпоса является постоянным укрепленным местопребыванием Кер-Оглы и его соратников. Однако, судя по географическому происхождению вариантов эпоса, крепость эта локализуется в различных и

* С. С. Пени.—Кер-огау, восточный поэт—наездник, Тифлис, 1856, стр. 2.

** Ibid.

довольно отдаленных друг от друга местностях. „Шамли-бел“ то находится в Персии, а именно в долине Салмаста, где и теперь показывают развалины предполагаемой крепости, то в Турции—в Соганлуговых горах, между Карсом и Эрзерумом, а также в Кульнических горах, то в Грузии, недалеко от Тбилиси, и т. д.

Несмотря на то, что в народном эпосе крепость „Шамли-бел“ считается постоянным убежищем Кер-Оглы, тем не менее наличие в разных странах стольких крепостей, связанных с именем Кер-Оглы, не лишено некоторой исторической действительности. Это обстоятельство служит основанием к предположению, что Кер-Оглы вследствие своей бурной наезднической жизни, полной военных приключений и опасностей, принужден бывал со своими соратниками скитаться и основать то в одной, то в другой стране временное местопребывание, воздвигая в горах неприступные крепости.

Такое предположение до некоторой степени подтверждается на основании интересного армянского рукописного песенника от 1721 г. Песенник этот написан армянским купцом из Персии—Элиасом Мушеганом, который играл некоторую политическую роль в Персии и был командирован персидским шахом в Россию, где (в Астрахани) он был арестован, как тайный политический агент. Среди забранных при аресте бумаг оказался вышеупомянутый сборник песен*. В этой рукописи помещены некоторые песни из эпоса „Кер-Оглы“ на турецком языке, написанные армянскими буквами, причем предпослано сопроводительное предисловие, откуда приводим интересные нас выдержки.

„Кер-Оглы по национальности был турок-осман. Говорят, что он происходил из Баязета. Муж сей проживал в горах и лесах страны османской. Во главе многочисленных наездников он господствовал над дорогами: иногда грабил проезжих купцов, иногда мирно взимал с них деньги. Настоящее его местопребывание находилось между городами Карсом и Эрзерумом; есть там большой лес, ныне называемый Саганлу. Там построил он крепость, которая называется Кер-Оглы каласы; имеет он крепости также в других местах. Это было в царствование Шах-Аббаса персидского и Султана-Мурада турецкого“.

